# Սերգեյ Դովլաթով

## Կոմպրոմիսներ

### Կոմպրոմիս երրորդ

(«Մոլոդյոժ Էստոնիի»: Օգոստոս: 1974 թ.)

«ԻՆՁ ԶԳՈՒՄ ԵՄ, ԻՆՉՊԵՍ ՏԱՆԸ; (Տալլինի հյուրերը): Ալլա Մելեշկոն արտասովոր հրապուրիչ արտաքին ունի: Կյանքում, անշուշտ, դա չէ կարեւորը: Այդուհանդերձ, այդուհանդերձ… Գուցե հենց դա է պատճառը, որ շրջապատն անփոփոխ բարյացկամությամբ է վերաբերվում այդ ծիծաղկոտ, փոքր-ինչ կոպիտ շարժուձեւով աղջկան…

Ալլան մեր քաղաքի անվանի հյուրերի թվում չէ: Բարձր մակարդակի գիտաժողովի մասնակից չէ: Մարզական նվաճումներն էլ նրա տարերքը չեն…

Ալլային մեր քաղաք է բերել… հետաքրքրասիրությունը: Այո, հենց հետաքրքրասիրությունը, այդ հանգիստ չտվող զգացմունքը, որ մարդուն ստիպում է անսպասելիորեն թողնել-հեռանալ հայրենի բնակավայրի հարմարավետությունից: Ես դա կանվանեի ճանապարհի զգացողություն, հորիզոնի կանչ, ճամփորդի մշտառկա անհամբերություն…

«Անկայունությունն է… շարժումը», գրել է նշանավոր տեսաբան-երաժշտագետ Չեռնին…

Որոշեցինք մի քանի հարց ուղղել Ալլային.

Ի՞նչ կասեք Տալլինի մասին:

Հրաշալի քաղաք է՝ մտերմիկ ու զուսպ: Ապշեցնում է հնի ու արդիականի ներդաշնակ հակադրությամբ: Նրա լռությունն ու խաղաղությունը խոսում են հպարտ հզորության մասին:

Ինչպե՞ս եղավ, որ հայտնվեցիք այստեղ:

Շատ էի լսել այստեղի դիզայներների ու նկարիչների մասին: Եվ հետո՝ սիրում եմ ծովը…

Միայնա՞կ եք ճամփորդում:

Իմ անփոփոխ ուղեկիցները լուսանկարչական ապարատն ու Ալեքսանդր Բլոկի բանաստեղծություններն են…

Որտե՞ղ եք արդեն եղել:

Վիշգորոդում ու Կադրիորգում, ուր ինձ շրջապատել էին ձեռնասուն սկյուռները՝ քնքուշ ու անպաշտպան:

Ի՞նչ ծրագրեր ունեք:

Ամառը կվերջանա: Կսկսվեն պարապմունքներն իմ պարարվեստի ստուդիայում: Կրկին՝ համառ, լարված աշխատանք… Իսկ առայժմ՝ ինձ այստեղ զգում եմ, ինչպես տանը»:

Այդ պատմության մեջ չկան հրեշտակներ ու չկան չարագործներ… Չկան մեղսագործներ ու բարեպաշտներ չկան: Ասենք, կյանքում էլ նրանք գոյություն չունեն: Արդեն մի քանի տարի հետեւում եմ…

Մի խմբագիր ինձ ասում էր .

Քո գրածներում բոլոր գործող անձինք սրիկաներ են: Իսկ եթե հերոսը սրիկա է, ապա պատմվածքի տրամաբանությամբ նրան պիտի տանես դեպի բարոյական անկում: Կամ՝ դեպի արժանի պատիժ: Իսկ քո սրիկաները ինչ-որ շատ բնական

են՝ ինչպես անձրեւը կամ ձյունը…

Որտե՞ղ ես սրիկան տեսնում, ասում էի, ո՞վ է, օրինակ, սրիկա:

Խմբագիրն ինձ այնպես էր նայում, ինչպես նայում են վատ շրջապատ ընկած ու իր ընկերներին արդարացնել ձգտող մարդուն…

Վաղուց արդեն մարդկանց դրական ու բացասական չեմ բաժանում: Գրական հերոսներին՝ առավել եւս: Բացի այդ, վստահ չեմ, թե կյանքում ոճրագործությանն անխուսափելիորեն հետեւում է զղջումը, իսկ սխրանքին՝ երանությունը: Մենք այն ենք, ինչ մեզ զգում ենք: Մեր հատկությունները, առաքինություններն ու արատները լույս աշխարհ են գալիս կյանքի նրբին հպումներից… «Բնությո՛ւն… դու իմ աստվածուհին ես»: Եվ այդպես շարունակ… Ինչեւէ…

Այս պատմության մեջ չկան հրեշտակներ ու չկան չարագործներ, չեն կարող լինել: Հերոսներից մեկը ինքս եմ: Կա նաեւ Միշա Շաբլինսկին՝ իրեն բնորոշ «անկանոն ապերցեպցիա», «իմանենտ դուալիզմ» արտահայտություններով… Այնուհետեւ հայտնվում է Միտյա Կլենկին, որին նույնպես հեշտ է ճանաչել: Փողկապի անողացված քորոցների ու կեղծ սաթե խոշոր մուշտուկների հանդեպ ունեցած թուլությունը նրան լայն ճանաչում է բերել:

Ի՞նչն է մեզ միավորում: Թերեւս, այսպես ասած, թեթեւ հակակրանքը հանդեպ լրագրային աշխատանքի պաշտոնական կողմը: Մի տեսակ առողջ ցինիզմ, որ օգնում էր խուսափել ամպագորգոռ խոսքերից…

Մեր խմբագրության երեսներկու աշխատակիցներից քսանութն իրենց կոչում էին «հանրապետության ոսկե գրիչը»: Մենք երեքս, տարբերվելու համար, կոչվում էինք «արծաթե գրիչ»: Դիմա Շերը, որ մի թղթակցությունում գրել էր . «Արհեստական երիկամը մեր առօրյայի առօրեական երեւույթներից է», համարվում էր «փայտե գրիչ»:

Մի խոսքով, ընկերություն էինք անում: Շաբլինսկին աշխատում էր արդյունաբերության բաժնում, նրա նյութերը բանավեճեր չէին հարուցում: Դրանցում գերակշռում էին մասնագետ ընթերցողին հասցեագրված թվերը:

Կլենսկին բանում էր մարզական բաժնում, վարում էր ամենօրյա ժամանակագրությունը: Նրա ճշգրիտ, գործնական հաղորդումները զուրկ էին զգացմունքներից: Ինձ խմբագիրը դեռ ապրիլին ասել էր . «Եթե ֆելիետոններ գրես՝ բնակարան կտանք»:

Դժվար գործ է: Ամեն մի փաստը հարկավոր է հանգամանորեն ստուգել: Քննադատության օբյեկտները կաշվից դուրս են գալիս՝ սեփական անձը պաշտպանելու համար: Քաղաքը փոքր է, մարդիկ՝ ի տես: Կարճ ասած, երկու անգամ ինձ փորձեցին ծեծել: Մի անգամ՝ կայարանի բեռնակիրները (դա նրանց հաջողվեց): Մյուսը ֆարցովշչիկ Չիգիրն էր, որը ինձ խփեց «բորսալինո» գլխարկով ու անմիջապես նոկաուտ ստացավ:

Հրապարակումներս ունենում էին անթիվ արձագանքներ: Երբեմն՝ սպառնալի: Դա ինձ նույնիսկ ուրախացնում էր: Ատելությունը վկայում էր, որ թերթը դեռեւս ընդունակ էր կրքեր բորբոքելու:

Յուրաքանչյուրս զբաղվում էինք մեր գործով: Երեքս էլ վատ չէինք վաստակում: Շաբլինսկին գործուղումներից բերում էր ապխտած ձուկ, բադի ձվեր եւ նույնիսկ կենդանի խոճկորներ: Կլենսկին գիրք էր գրում սպորտի մի վետերանի փոխարեն, որին անվանում էր «բարի պլանտատոր»: Մի խոսքով, կատարում էինք բարեխիղճ ու ազնիվ աշխատանք…

Հետո ի՞նչ: Առանձնապես ոչինչ: Դվինսկից մի աղջիկ եկավ Միտյա Կլենսկու մոտ: Չգիտեմ անգամ, թե նպատակն ինչ էր: Երիտասարդ կանանց մի տեսակ կա, որ ոչ թե արատավոր են, փչացած, այլ, դժվարանում եմ ճիշտ որակել՝ անհոգ: Նրանց կյանքը անընդհատ գործողություն է: Արարքների առատության հետեւում հոգին հազիվ է նշմարվում: Հրեշավոր ջանքերի գնով, տարբեր զոհողությունների գնալով, օրինակ, նրանք ձեռք են բերում արտասահմանյան երկարաճիտ կոշիկներ: Դժվար է պատկերացնել, թե դա որքան ժամանակ ու միջոցներ է պահանջում: Այնուհետեւ՝ ցուցադրում են այդ կոշիկները: Անվերջ երեկույթներ, պարեր, կամ պարզապես ճեմում են հանրախանութից դեպի ռատուշա՝ լուսավորված ցուցափեղկերի երկայնքով: Երբեմն այդ կոշիկները մթին են տալիս ձեր մահճակալի կողքին: Եվ դա ինչ-որ այլանդակ այլասերություն չէ: Պարզապես աղջիկն ամուսնացած չէ: Խմել ենք, ավտոբուս

չկա, տաքսի բռնելն անհնար է: Իսկ տանտերն էլ համակրելի տղամարդ է: Տանը երեք սրբապատկեր կա, Մագոմաեւի ինքնագիրը, Քոուլ Փորթեր… Երեկոյան աղջիկները պարում են, իսկ ցերեկը՝ աշխատում: Լավ էլ աշխատում են: Հյուր գնում են հետաքրքիր մարդկանց: Լրագրողներին, օրինակ…

Միտյան բացեց մեր բաժնի դուռը: Հետը աղջիկ կար:

Այստեղ նստիր, ասում է աղջկան: Շեֆիս տրամադրությունը տեղը չէ: Սերժ, ոչի՞նչ, եթե այստեղ մի քիչ նստի:

Թող նստի:

Աղջիկը նստեց լուսամուտի մոտ, հանեց դիմափոշու տուփը: Ես շարունակեցի աշխատանքս՝ առանց նկատելի խանդավառության: Ֆելիետոնը, որ գրում էի, վերնագրել էի «ՎՄԿ-ի իրական դեմքը»: Թե ինչ է նշանակում ՎՄԿ՝ իսպառ մոռացել եմ:

Ձեր անունն ի՞նչ է:

Ալլա Մելեշկո: Ճի՞շտ է, որ բոլոր լրագրողները երազում են վեպ գրել:

Ոչ, ստեցի ես:

Աղջիկը շուրթերն էլ ներկեց ու սկսեց նայել շուրջը:

Որտե՞ղ եք սովորում, հարցրի:

Այստեղ ինքը սկսեց ստել: Էլ դրամատիկական ստուդիա, էլ մնջախաղ, էլ նկարահանումների հրավիրող հարավսլավացի ռեժիսոր: Անունը Յոշկա Գատի: Ինչ-որ «Ինտենսին», սակայն, տարադրամը չի փոխանցում:

Ի՜նչ ազնիվ զարգացում է ապրել ստախոսությունը վերջին երկու հարյուր տարվա ընթացքում: Առաջ ստում էին, թե փեսացու ունեն՝ միլիոնների ու ձիաբուծարանի տեր: Հիմա ստում են հարավսլավացի ռեժիսորի մասին: Ժամանակին մարդիկ հպարտանում էին իրենց ձիերով, իսկ հիմա…

Լեհաստանից բերված վելվետե հողաթափերով: Խլեստակովը մտերիմ էր Պուշկինի հետ, իսկ իմ ծանոթներից Գենիչը ճնշված ու լռակյաց վերադարձավ Մոսկվայից՝ Օլժաս Սուլեյմանովին ՅՈՒՄ-ում էր տեսել: Մտավորական մարդիկ անգամ ստում են, թե կարգին աշխատավարձ են ստանում: Ինքս էլ միշտ մի քսան ռուբլի ավելացնում եմ, թեեւ վատ չեմ վաստակում… Ինչեւէ…

Աղջիկը սկսեց ստել: Նման դեպքերում ես լռում եմ՝ անկեղծ փչոցը սուտ չէ, դա պոեզիա է: Նույնիսկ, չգիտեմ ինչու, վստահ եմ, որ նրա անունն ամենեւին էլ Ալլա չէ…

Հետո հայտնվեց Կլենսկին:

Վերջացրի, ասում է, երեք հարյուր տողը պատքարտուղարի թղթապանակում է: Կարելի է մի քիչ հանգստանալ:

Անմիջապես ամփոփեցի ֆելիետոնս: Գրեցի մոտավորապես այսպես . «Ինչո՞ւ էին լռում արտադրամասի ակտիվիստները: Ինչո՞վ էր զբաղված ընկերական դատարանը: Չէ՞ որ վաղուց հայտնի է՝ ագահությունը բազմապատկած անպատժելիությամբ, հանգեցնում է հանցագործության»…

Գնացինք, ասում է Կլեմսին, ինչքա՞ն կարելի է սպասել:

Ֆելիետոնս հանձնեցի, գանգեցինք Շաբլինսկուն: Նրա արձագանքը շատ անմիջական էր .

Ռոզկան քննություններ է հանձնում: Ութ ռուբլի փող ունեմ: Վաղը ստեղծագործական ազատ օրս է: Ինչպես ասում են՝ մեղք է չօգտվելը…

Հավաքվեցինք աստիճանահարթակին՝ վերելակի մոտ: Մոտեցավ Ժբանկովը: Լուռ լուսանկարեց Ալլային ու գնաց:

Ի՞նչ ենք անելու, հարցրի:

Զանգենք Վերկային:

Վերա Խլոպինան աշխատում էր մեքենագրական բյուրոյում, չնայած հեշտությամբ կարող էր դառնալ սրբագրիչ եւ անգամ՝ թողարկիչ: Նյարդային, գրագետ ու բանիմաց՝ նա ինքն իրեն վնասում էր հիստերիկ, հանդուգն ուղղախոսությամբ: Նրա տանը հաճույքով հավաքվում էր թերթի ղեկավարությունը… Բառացիորեն երկու բաժակ խմելուց հետո Խլոպինան վտանգավոր էր դառնում: Հիշում եմ, գոռում էր երիտասարդական թերթի խմբագրի տեղական Վեյսբլատի վրա՝ դիմելով բոլորիս .

Չեք լսում, ախր: Նա մութ է, ինչպես Արմսթրոնգի մաշկը: Նրան անգամ ավտոմեխանիկի աշխատանք չի կարելի վստահել:

Կանանց էլ չէր խնայում: Ամեն բան ճակատներին ասում էր . սեփական մեղքերը հմտորեն արդարացնելը, արտասահմանյան չուլ-փալասի համար վազվզոցը, հարուստ ու մարած ամուսիններին տանելը:

Մեզ երեքիս Վերան համակրում էր: Եվ ճիշտ էր անում: Կարիերիստ չէինք, ավտոմեքենա չէինք գնում, քթներս վեր չէինք ցցում: Եվ սիրում էինք Վերային: Թեեւ նրա հետ հարաբերությունները զուտ ընկերական էին: Միշտ վառվող այտերով, գեր, փոքր-ինչ անհեթեթ Վերան բացառիկ առաքինի կին էր:

Խլոպինան խմելը չէ, որ սիրում է: Նա սիրում էր ընկերական հավաքներ կազմակերպել, վազվզել, ռիսլինգ ճարել, սեղան գցել: Մեզ ասում էր .

Հիմա կզանգեմ Լյուդկային՝ գալանտերեայի բաժնից: Երազ է, բարդու պես ձիգ, աչքերը կանաչ ու այ այսքան…

Լյուդային բղավում էր հեռախոսով .

Ամեն ինչ թող, մեքենա բռնիր ու արի այստեղ: Սպասում եմ: Ի՞նչ: Գրողներ, լրագրողներ, օղին ծով է, տորթ…

Վերջում գալիս էր Լյուդկան՝ սլացիկ, նրբիրան, աչքերը, իրոք, հսկայական… միլիցիայի կապիտան ամուսնու հետ…

Այդ ամենն արվում էր միանգամայն անշահախնդրորեն: Պարզապես Վերկան միայնակ էր:

Եվ ուրեմն՝ գնացինք նրա մոտ: Ջին գնեցինք, տոնիկ, էլի ինչ պետք էր: Պիտի ասեմ, որ այդ երեկույթներն ուսումնասիրել եմ: Նախապես գիտեմ, թե ինչ է լինելու: Ասենք, դրանք միշտ միատեսակ են անցնում: Մեկընդմիշտ հաստատված կարգով: Յուրատեսակ համերգ, ուր բոլոր ելույթները նշված են ծրագրում:

Շաբլինսկին կպատմի քաղկոմական ֆանտաստիկ մի որսի մասին: Արծվաչափ կտցարներ, անտառի մեջ ֆիննական բաղնիքով տնակ, երեւանյան կոնյակ… Հետո ես նրան կընդհատեմ իմ սիրած կատակով՝

Իսկ ծառերի տակ արջի մորթի հագած շրջկոմի հրահանգիչներ են վխտում…

Նախանձում ես, առանց չարության քմծիծաղ կտա Շաբլինսկին, քեզ ասում էի՝ հետս արի…

Հետո Կլենսկին մի բան կպատմի ձիարշավարանի մասին: Ձիերի տարօրինակ անուններ կհնչեն՝ Հաննիբալ, Ուրախ մեղեդի, Ռոկ-ըն-ռոլ… «Դուկելը շրջադարձին հետ է պահում նրան, ֆավորիտը չորս անգամ սայթաքում է, գրպանումս վեց հատ էքսպրես է, վերջում էլ, ինչպես միշտ՝ դատարկ վարգով դեպի տուն»…

Հետո տանտիրուհին կհարբի ու ճակատներիս կասի այն, ինչ մտածում է յուրաքանչյուրիս մասին: Մենք, սակայն, սովոր ենք ու չենք նեղանում: Կլենսկուն կհասնի անճաշակ փողկապի համար: Ինձ՝ ղեկավարության նկատմամբ լոյալ վերաբերմունքի համար: Շաբլինսկուն՝ սնոբիզմի համար: Կպարզվի, որ նա խստապահանջ ու աչառու կերպով ուսումնասիրում է մեր բոլոր թղթակցությունները՝ ով է անտաղանդ, ով՝ տաղանդավոր, եւ նախապատերազմյան ձայնասկավառակներ, եւ արցունք, եւ հրաշքով գնված օղի, եւ «դու ինձ հարգո՞ւմ ես»՝ արդեն վերջում: Ի դեպ, վատ խորագիր չէ երգիծական բաժնի համար…

Հիմնականում այդպես էլ ընթացավ: Փայտիկների վրա քաշած նրբերշիկ խորովեցինք: Վերան հարբեց . համբուրում էր Դոբրոլյուբովի դիմանկարը՝ «Ի՜նչ մարդիկ էին»… Շաբլինսկին ինչ-որ գռեհիկ միջադեպ պատմեց Դոբրոլյուբովի կյանքից, ես անկիրք հերքեցի: Ալլան հուզելու աստիճան անհամոզիչ ստում էր, թե Օդրի Հեպբերնը ներկող շամպուն է ուղարկել իրեն…

Հետո Միտյայի հետ առանձնացան խոհանոցում: Կլենսկին կանանց վրա ազդելու ապշեցուցիչ ունակության տեր էր: Գաղտնիքը կանանց հետ երկար զրուցելն էր: Խոսում էր, ընդ որում, ոչ թե իր, այլ նրանց մասին: Եվ ինչ էլ ասեր՝ «Դուք մարդկանց վստահելու հակում ունեք, սակայն՝ որոշակի սահմաններում…», նրա մեթոդը գործում էր անխափան թե՛ ՊՏՈ-ի ուսանողուհիների, թե՛ հեռուստատեսության լկտի թղթակցուհիների վրա:

Շաբլինսկին ու ես շատ շուտ հոգնեցրինք իրար: Նա առանց հրաժեշտ տալու գնաց: Վերան քնել էր: Ես զանգեցի Մարինային ու նույնպես գնացի:

Ալլային միայն մի բան ասացի . «Ուզո՞ւմ եք աննկատ հեռանանք»: Ես բոլորին այդպես եմ ասում: (Կանանց իհարկե): Կամ գրեթե բոլորին: Համենայն դեպս: Երկիմաստ չէ եւ միաժամանակ անշառ է:

Անհարմար է, ասաց Ալլան, ախր Միտյայի մոտ եմ հյուր եկել…

Առավոտյան խմբագրությունում շատ գործ ունեի: Պատրաստում էի «Ժողովրդական վերահսկողություն» էջը եւ բուժվում հանքային ջրով: Շաբլինսկին վարպետ-դաստիարակների կոնֆերանսից հետո վերծանում էր ձայնագրությունը: Հայտնվեց Կլենսկին՝ մռայլ, տանջահար: Արտահայտվեց վերացական ու հանելուկակերպ՝ «Դա նույնպիսի ֆիկցիա է, ինչպես, որ մեր ամբողջ կյանքը»: Ճաշին զանգեց հեռախոսը:

Ալլան է: Միտյային չե՞ք տեսել:

Ա-ա, ասում եմ, բարեւ ձեզ: Ինչպե՞ս եք:

Հեմոգլոբինը՝ 200:

Չհասկացա:

Ինչո՞ւ եք տարօրինակ հարցեր տալիս: «Ինչպե՞ս ես»… Սոսկալի վատ, իհարկե…

Գնացի Կլենսկուն փնտրելու, սակայն ինձ ասացին, որ նա գործուղում է գնացել: Կունգլա ավանում հերոսուհի մայրը ծնել է տասնմեկերորդին: Ասացի Ալլային:

Ինչ տականքն է, նույնիսկ չասաց, թե գնում է…

Լռություն տիրեց: Ինձ դա դուր չեկավ: Ես ի՞նչ կապ ունեմ: Էջ պիտի հանձնեմ: Վերնագրերը սահմոկեցուցիչ են . «Բալլադ կորած արիֆմոմետրի մասին»… Միտկայի արածն էլ մի բան չէ՝ մեկնել ու օրիորդին ոչինչ չի ասել: Ինձ անհարմար զգացի:

Ուզո՞ւմ եք, ասում եմ, միասին նախաճաշենք:

Նախաճաշել, երեւի, պետք է: Վիճակս մի տեսակ անհասկանալի է:

Ժամադրեցի: Հետո թղթերը անկանոն թափթփեցի սեղանիս: Իբր աշխատանքը եռում է…

Ջով ու ամպած մայիսյան օր էր: Սրճարանի ցուցափեղկերի վերեւում աղմուկով ալեկոծվում էին քաթանե հովհարները: Ալլան եկել էր հսկայական մոմլաթե սոմբրերոյով: Ակնհայտորեն հպարտանում էր դրանով: Տրտում նայեցի շուրջս: Պակասում էր միայն, որ այդ սոմբրերոյի հետ ինձ տեսնեին Մարինայի ընկերուհիները: Դրա եզրերը դիպչում էին ջրհորդաններին: Սրճարանում պարզվեց, որ այն դյուրությամբ ծալվում-փոքրանում է: Ինչ-որ կոտլետներ կերանք, խմորեղենով թեյ խմեցինք: Իրեն այնպես էր պահում, կարծես պարտք եմ իրեն: Ես հարցրի .

Երեւի արձակուրդո՞ւմ եք:

Այո, ասում է, «Հռոմեական արձակուրդում»:

Իրոք որ՝ արքայադուստրը լրագրողների մեջ: Ինչպե՞ս է ձեր մայրիկը թողել ձեզ:

Իսկ ի՞նչ է:

Անծանոթ քաղաք, գայթակղություններ…

Հանդիպում են երկու մայրիկներ՝ «Աղջկադ ինչպե՞ս է որ ազատ թողել ես»: «Իսկ ինչու պիտի չթողնեմ կամ անհանգստանամ: Նա ինը տարեկանից միլիցիայի հսկողության տակ է»…

Քաղաքավարությամբ ծիծաղեցի: Կանչեցի մատուցողին: Վճարեցինք, դուրս եկանք: Ասում եմ նրան .

Դե, երջանիկ էի ձեր տեսքին արժանանալու համար, մադամ:

Չաո, Զոննի, ասաց Ալլան:

Այդ դեպքում ոչ թե Զոննի, այլ Զովաննի:

Գուդ բայ, Զովաննի:

Նա հեռացավ իր հսկայական մոմլաթե գլխարկը գլխին՝ բարալիկ, ինչպես դառնամատիտեղ տեսակի սունկը: Իսկ ես շտապեցի խմբագրություն: Պարզվեց, որ պատքարտուղարն արդեն ինձ է փնտրում: Ժամը վեցին էջը պատրաստ էր:

Երեկոյան նստած էի թատրոնում: Ներկայացնում էին «Զանգը» ըստ Հեմինգուեյի: Սոսկալի բեմադրություն էր՝ «Հրաշալի յոթնյակի» եւ «Երիտասարդ Գվարդիայի» խառնուրդ: Երկրորդ արարում, օրինակ, Ռոբերտ Զորդանը սափրվեց դաշույնով: Ի դեպ, լեհական ջինսով էր: Ճիշտ իմի պես:

Ներկայացման վերջում այնպիսի հրաձգություն սկսվեց, որ հեռացա՝ առանց օվացիաներին սպասելու: Մեր քաղաքը բարեհոգի է, բոլոր ներկայացումներն ավարտվում են բուռն ծափահարություններով…

Վաղ առավոտյան եկա հիմնարկ: Պատվիրված էր դրական գրախոսություն: Սուրճից ու ծխախոտից զզված սկսեցի գրել .

«Հեմինգուեյի ստեղծագործությունները բեմական չեն: Այդ գրողի միակ դրաման թատերական կենսագրություն չի ունեցել՝ մնալով «վիպակ՝ երկխոսություններում»: Այն լավ ընթերցվում է, ընդգծում էր հեղինակը: Էկրանավորելու Հոլիվուդի անթիվ փորձերը…»

Այստեղ զանգեց Վերան: Ասում եմ .

Երդվում եմ, զբաղված եմ: Ի՞նչ կա:

Մի րոպեով բարձրացիր:

Ի՞նչ է եղել:

Ասում եմ՝ մի րոպեով բարձրացիր:

Գրողը տանի…

Վերան ինձ սպասում էր միջանցքում:

Հասկանում ես, նրան փող է պետք:

Ես չհասկացա: Ավելի ճիշտ հասկացա, բայց ասացի .

Չեմ հասկանում:

Ալկային փող է պետք: Տոմսի փող չունի:

Վերա, դու ինձ գիտես, բայց մինչեւ ամսի տասնչորսը դա բացառվում է: Ինչքա՞ն է պետք:

Գոնե երեսուն:

Միանգամայն բացառվում է: Ապրիլի համար հոնորար չունեմ… Հաշվապահությունում յոթանասունհինգ պարտք եմ… Հեռուստացույցի պարտքը մինչեւ վերջ դեռ չեմ տվել… Եվ հետո, չեմ հասկանում… Իսկ Կլենսկի՞ն: Չէ՞ որ իր կադրն է…

Քաղաքում չէ:

Շուտով կվերադառնա:

Հասկանում ես, ողբերգություն կլինի: Զանգել է նրա փեսացուն Սարատովից…

Դվինսկից, ասացի:

Սարատովից, դա կարեւոր չէ… Ասել է, որ կկախվի, եթե նա չվերադառնա: Ալկան փետրվարից ճամփորդում է:

Դե թող գա, տանի:

Երկուշաբթի օրը քննության է:

Հրաշալի է, ասում եմ, կախվել կարող է, իսկ քննության չգնալ չի կարող…

Հեռախոսով լալիս էր այդ փեսացուն, իսկապես լալիս էր…

Չունեմ երեսուն ռուբլի: Հետո, Աստծու սիրուն, տարօրինակ է մի տեսակ… Գլխավորն այն է, որ չունեմ:

Ամենահետաքրքիրն այն էր, որ ճիշտ էի ասում:

Իսկ եթե պարտքով վերցնենք, ասում է Վերան:

Իսկ ինչու պիտի պարտք անենք: Կլենսկու աղջիկն է, թող Կլենսկին էլ անհանգստանա:

Շաբլինսկուն չհարցնե՞նք:

Գնացինք Շաբլինսկու մոտ: Նա նույնիսկ վրդովվեց.

Ես ութ ռուբլի ունեի, ազնվականավայել տվեցի: Ինքս եմ մտածում, որտեղից ճարեմ: Սպասեք, թող Միտկան գա ու գլուխ հանի:

Լավ, ասաց Վերան, մի բան կհնարեմ:

Ու քայլեց դեպի դուռը:

Լսիր, ասում եմ, եթե չհնարես, զանգիր…

Բարի:

Կարելի է գիտե՞ս ինչ անել: Կարելի է նրանից հարցազրույց վերցնել:

Որ ի՞նչ:

«Տալլինի հյուրերը» խորագրի տակ: Ուսանողուհին ուսումնասիրում է գոթական ճարտարապետությունը: Չի բաժանվում Բլոկի հատորյակից: Զբոսայգում կերակրում է սկյուռներին… Մի քսան ռուբլի կտան, գուցեեւ՝ քսանհինգ…

Սերժ, ականջի հետեւ չգցես:

Կանեմ…

Այստեղ ինձ կանչեցին խմբագրի մոտ: Հենրիխ Ֆրանցեւիչը նստած էր իր ընդարձակ աշխատասենյակի պատուհանի մոտ: Ռադիոլան ու հեռուստացույցը անջատած էին: Լուռ էին նաեւ սելեկտորն ու հեռախոսները:

Նստեք, ասաց խմբագիրը, պատասխանատու հանձնարարություն ունեք: Մեր թերթում թույլ է ներկայացված բարոյական թեման: Ընտրությունը շատ լայն է: Ալիմենտից չարամտորեն խուսափողներ, հովանավորչություն, պետական միջոցների հափշտակում… Հույսս ձեզ վրա է: Գնացեք ժողովրդական դատարան, Պետավտոտեսչություն…

Մի բան կհնարեմ:

Գործի անցեք, ասաց խմբագիրը, բարոյական թեման հույժ կարեւոր է…

Օքեյ, ասում եմ:

Եվ չմոռանաք՝ խմբագրությունում շարունակվում է բաց մրցույթը: Լավագույն նյութերը կարժանանան դրամական մրցանակների: Իսկ հաղթողը կմեկնի

ԳԴՀ…

Կամավո՞ր, հարցրի:

Այսի՞նքն:

Ինձ անգամ Բուլղարիա չթողեցին: Գարնանը ներկայացրել էի փաստաթղթերը:

Քիչ խմեք, ասաց Տուրոնոկը:

Դե լավ, ասում եմ, այստեղ էլ վատ չէ…

Այդ օրը լի էր այլ հոգսերով, բախումներով, վեճերով, չլուծված խնդիրներով: Մասնակցեցի երկու խորհրդակցության: Պատասխանեցի չորս նամակի: Մի քսան անգամ հեռախոսով խոսեցի: Կոկտեյլներ խմեցի, Մարիանային գրկեցի…

Ամեն ինչ ընթանում էր սովոր հունով:

Իսկ երեկվա օրը ո՞ւր կորավ: Եթե մոռացված է, հապա ի՞նչն ինձ ստիպեց վեց տարի անց գրել . «Այս պատմության մեջ չկան հրեշտակներ ու չկան չարագործներ … Չկան մեղսագործներ ու բարեպաշտներ չկան»…

Առհասարակ, ի՞նչ տեսակ մարդիկ ենք մենք: